Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/62685/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

28 դեկտեմբերի 2022թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Վազա-Ֆարմ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. փետրվարի 22-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19-6 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վազա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու մասին 2022թ. նոյեմբերի 14-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Վազա-Ֆարմ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2022թ. նոյեմբերի 29-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. փետրվարի 22-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19-6 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վազա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու մասին 2022թ. նոյեմբերի 14-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են տրամադրվել 2022թ. դեկտեմբերի 23-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վազա-Ֆարմ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. փետրվարի 22-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19-6 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վազա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու մասին 2022թ.

նոյեմբերի 14-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ/62685/02/22 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 2023թ. փետրվարի 10-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ